

Կարծիք

Աննա Անդրանիկի Մելքոնյանի՝

«Կանխենթադրույթը ֆրանսալեզու լրագրային խոսույթում» թեմայով
Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցման ատենախոսության մասին

Ներկայիս աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում մեծ է տեղեկատվության դերը հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Տեղեկատվական նոր ձևերի և եղանակների ներդրումը նպաստում է մեդիահաղորդակցության կատարելագործմանն ու նրա գործառույթների ընդլայնմանը, որն էլ ենթադրում է ապահովել հանրային իրազեկումը, ինչպես նաև նպաստել հասարակական կարծիքի ձևավորմանը: Այս առումով, Աննա Մելքոնյանի ատենախոսության թեման արդիական է:

Սույն ատենախոսության նպատակն է ուսումնասիրել մեդիախոսույթի առանձնահատկությունները և վերջինիս բնորոշ հատկանիշները, վերհանել մեդիախոսույթի սուբյեկտիվության լեզվական և արտալեզվական ձևերը, որոնք հատկապես արտահայտված են ներակա մակարդակում, ինչպես նաև հստակեցնել մեդիախոսույթի հեղինակների դերը և նրանց խոսույթային դիրքորոշումը: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսն ուսումնասիրության է ենթարկել մի շարք խնդիրներ, որոնք համոզիչ լուծումներ են ստացել աշխատանքի եզրահանգումներում:

Աշխատանքն իր տրամաբանական ավարտին հասցնելու համար Աննա Մելքոնյանը ներկայացրել է մի քանի վարկածներ, որոնցից առաջինում ուսումնասիրել է լրագրողական լեզվում առկա սուբյեկտիվության գործոնը: Հիմք ընդունելով Թ. Լանսիենի, Ռ. Կլոսի, Պ. Պոնտենի, Կերբրատ-Օրեքշիոնիի և Պ. Շարոդոյի աշխատությունները, ատենախոսության հեղինակը իրավացիորեն նշում է, որ ըստ էության մեդիահաղորդակցությունը պահանջում է փաստերի և իրադարձությունների օբյեկտիվ ներկայացում, և եզրահանգում, որ այդ օբյեկտիվությունը հաճախ խախտվում է:

Ատենախոսության հաջորդ վարկածը վերաբերվում է մեդիախոսույթում հասարակական-մշակութային արժեքների կարևորությանը: Աննա Մելքոնյանը հանգամանալի ներկայացնում և վերլուծում է մեդիահաղորդակցության, լեզվի և մշակույթի միջև եղած կապերը և մատնանշում դրանց կարևորությունը ուսումնասիրվող բնագավառում:

Ատենախոսության կառուցվածքը լիովին համապատասխանում է ընդունված չափանիշներին: Այն տրամաբանական է, փաստերի վերլուծության առումով համոզիչ և գիտականության սկզբունքին համահունչ: Աննա Մելքոնյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և եզրակացությունից: Ներկայացված

գրականության ցանկը ներառում է խոսույթի ուսումնասիրությամբ զբաղվող հայտնի ֆրանսիացի լեզվաբաններ Պ. Շարդոյի, Դ. Մենզոյի, Է. Բենվենիստի, Օ. Դյուկրոյի և այլոց աշխատությունները, ինչպես նաև ոլորտի հայ և ռուս լեզվաբանների աշխատություններ: Գրականության ցանկում առկա են նաև առցանց աղբյուրներ: Գլուխների էջային համամասնությունը կազմված է բավականին մեծ հմտությամբ, ըստ իս շատ ճիշտ գիտական մոտեցմաբ: Հարկ է նշել նաև, որ աշխատանքի երեք գլուխները և ենթագլուխները աչքի են ընկնում իրենց կոտ կառուցվածքով, տրամաբանական փոխկապակցվածությամբ:

Ատենախոսին հաջողվել է դուրս բերել մեղիախոսույթի առանձնահատկություններն ու բնութագրիչ հատկանիշները՝ հստակեցնելով այս խոսույթի սահմանները՝ այն տարբերակելով գիտական, քաղաքական և այլ տեսակի խոսույթներից: Ատենախոսը հանգամանալի ուսումնասիրության է ենթարկել նաև մեղիախոսույթի հեղինակների դերը և նրանց խոսույթային դիրքորոշումը, որն էլ հանդիսանում է սույն ատենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսության մեջ առաջ քաշված տեսական դրույթները հիմնավորված են ֆրանսիական մամուլից՝ *Le Monde*, *Le Figaro*, *Libération* հոդվածներով, ինչպես նաև *TV5*, *France1*, *F2* հեռուստաալիքներով հեռարձակված հարցազրույցներով և քաղաքական գործիչների ելույթներով: Ատենախոսին հաջողվել է համադրման, հակադրության, բաղադրիչային և համատեքստային, ինչպես նաև հերմենևտիկ մեթոդների կիրառմամբ կատարել լեզվաբանական ուշագրավ վերլուծություններ՝ դուրս բերելով հաղորդվող տեղեկատվության խորքային կառույցներում ներակա կանխենթադրույթը:

Այսուհանդերձ, կցանկանալինք ներկայացնել որոշ նկատառումներ և ատենախոսի կողմից ստանալ հետևյալ հարցերի պատասխանները.

1. 45-րդ էջում հեղինակը ներկայացնում է անաչառության, չեզոքության դրույթները դատավարական խոսույթում, նշում, որ ոլորտի ներկայացուցիչները հաճախ օրինակ են վերցնում լրագրողներից և սուբյեկտիվ են լինում իրենց գործունեության մեջ: Մենք կիսում ենք հեղինակի այն կարծիքը, որ թե իրավաբանության և թե լրագրողական ոլորտներում պետք է ցուցաբերվի առավելագույն անաչառություն և օբյեկտիվություն, սակայն անաչառության օրինակ պետք է ծառայի դատական համակարգը և օրինակ պետք է վերցնեն լրագրողները:
2. 45-րդ էջում հանդիպում ենք հետևյալ ասույթը՝ «Տիկին նախարարը բուժքրոջ մոտեցում ցուցաբերեց», այնուհետև ատենախոսության հեղինակը ներկայացնում է թե ինչ համատեքստում է արտաբերվել տվյալ ասույթը. «հեղինակը ֆրանսիացի լրագրող և բնապահպանության հարցերով պատգամավոր Նոել Մամերն է, ներակայացնում է սուր քննադատություն Ֆրանսիայի Բնապահպանության

նախարար Դ. Վուայնեի հասցեին՝ «TOTAL» նավթարդյունաբերական ընկերության կողմից պատճառած բնապահպանական աղետի վնասները լուրջ չգնահատելու համար, որի համար նա լրագրողի կողմից համեմատվել է բուժքրոջ հետ, քանի որ բուժքույրը, ի տարբերություն բժշկի, խնամում է հիվանդին, սակայն չի կարող ախտորոշել նրա հիվանդությունը: »: Օրինակը բավականին հետաքրքիր է, սակայն այստեղ ներակա իմաստը ընկալել որպես կանխենթադրույթ այնքան էլ ճիշտ չէ, քանի որ կանխենթադրույթը անհերքելի փաստ է, որը տարբեր ընկալումների տեղիք չի տալիս:

3. Ցանկալի կլիներ, որ օրինակների տարեթվերը լինեին 2020, 2021թթ. :
4. 58 –րդ էջում հանդիպում ենք այսպիսի օրինակի. «Je souris, mais ça ne vaut pas la peine», այնուհետև Աննա Մելքոնյանը տալիս է ասույթի թարգմանությունը «ես ժպտում եմ առանց ջանքեր թափելու» և անցնում ասույթի վերլուծությանը: Կցանականայինք նշել, որ տվյալ օրինակի հայերեն թարգմանությունը ավելի ճիշտ կլինի տալ հետևյալ կերպ՝ «ես ժպտում եմ, սակայն դա ոչինչ չի նշանակում», ինչի արդյունքում հետագա վերլուծությունը ավելի տրամաբանական կլինի:
5. Նույն օրինակի վերլուծության մեջ ատենախոսը վերլուծում է բայի հրամայական եղանակը, սակայն պետք է նշենք, որ տվյալ օրինակում բայը դրված չէ հրամայական եղանակով, բայն օգտագործված է սահմանական եղանակի ներկա ժամանակով, որը ներակա իմաստով արտահայտում է հրաման:
6. 59-րդ էջում, մանրարկիտ վերլուծելով օտ անորոշ դերանվան կիրառությունը մեղիախոսություն, նշում է, որ վերջինս «հատկապես գովազդային տեքստերում, շատ հաճախ կիրառվում է nous դերանվան փոխարեն»: Կցանականայինք նշել, որ օտ անորոշ դերանվան կիրառությունը nous անձնական դերանվան փոխարեն հատկանշական չէ գովազդային տեքստերին, այն առհասարակ ըստ իր կիրառման կանոնի կարող է փոխարինել nous անձնական դերանվանը:
7. Ատենախոսը աշխատանքում օգտագործել է ֆրանսերեն եզրույթներ: Ցանկալի կլիներ կիրառել դրանց հայերեն համարժեքները:

Վերը նշված դիտարկումները կրում են մասնակի բնույթ և չեն ազդում կատարած հետզոտության գիտական արժեքի վրա:

Հետազոտության արդյունքները առանձնակի կարևորություն են ներկայացնում ժամանակակից լեզվաբանության և ինչու ոչ նաև զանգվածային լրատվության ոլորտներում:

Աննա Մելքոնյանի ատենախոսությունը ավարտուն և ամբողջական աշխատանք է՝ գրված ուշադիր, առկա գիտական եզրահանգումներով :

Սեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը:

Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Ուստի և ներկայացնում ենք մեր միջնորդությունը ԵՊՀ-ում գործող Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդին՝ Աննա Անդրանիկի Մելքոնյանի՝ «Կանխենթադրույթը ֆրանսալեզու լրագրային խոսույթում» թեմայով թեկնածուական ատենախոսության համար շնորհել բանասիրության գիտությունների թեկնածուի գիտական աստիճան :

Գայանե Սարգսյան

Երևանի Պետական համալսարանի

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ. դոցենտ

Գրքաբանության ամբիոնի վարիչ

12.12.2022

